Հաստատված է՝

Հայկական Բժշկական ինստիտուտի

Ռեկտորի 27.08.2019թ.

Թիվ 764/23 հրամանով

Ընդունված՝

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 27.08.2019թ.

թիվ 51 նիստում

ռեկտոր՝ Գ.Հ. Միխոյան

(ստորագրություն)

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ

ԵՐԵՎԱՆ 2019 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԲԻ-ի նպատակն է ներգրավել առաջատար գիտնականների և դասախոսների, ովքեր ունեն մասնագիտական և մանկավարժական բարձր վարկանիշներ և նպաստել այդ կազմի պահպանմանը: Այդ գործընթացում կարևոր են.

1. Դասախոսական կազմի մրցույթային ընտրությունը;
2. Միջոցառումներ, որոնք ուղղված են մասնագիտական հմտությունների և կարողությունների հզորացմանը, նաև դասախոսների շարունակական վերապատրաստումը;
3. Երիտասարդ կադրերի ներգրավումը, հիմնականում ինստիտուտի շրջանավարտներից՝ կադրային ռեզերվն ապահովելու նպատակով;
4. Կրթական ծրագրերի արդիականացումը՝ նորարարական տեխնոլոգիաների հիման վրա, անցում ակտիվ և ինտերակտիվ ուսուցման մեթոդներով դասավանդմանը՝ պահպանելով միջառարկայական մոտեցումը;
5. Դասախոսական կազմի ձևավորման քաղաքականության արդիականացումը;
6. Կադրերի թարմացման և երիտասարդացման հարցում էթիկական նորմերի պահպանումը;
7. Դասախոսների ծանրաբեռնվածության ճշգրիտ բաշխումը;
8. Մասնագիտական և կատարված աշխատանքի կարգերի մշակումը;
9. Աշխատանքի վարձատրության դինամիկ աճը;
10. Աշխատանքի խրախուսումը պատվոգրերով, լրացուցիչ վարձով;
11. Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը տարիքով դասախոսների համար՝ սոցիալական աջակցություն;
12. Դասախոսների անհատական և մասնագիտական աճին նպաստող պայմանների ստեղծումը;
13. Կարիքների բացահայտումը;
14. Դասավանդման որակի և մասնագիտական կարողությունների գնահատումը;
15. Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի վերանայումը և կատարելագործումը: